



ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

ԵՒ ԻՐ « ՍԵՒ ՑԵԼԵՐԻ ՍԵՐՄՆԱՑԱՆԸ »



Որքան որ զիտեմ, Բախունցի երկրորդ հատորն է այս պատմութեան հաւաքածուն՝ « Սեւ Յելերի սերմնացանը »: Իր առաջին գիրքն է « Մքնաձոր »ը, նոյնպէս պատմութեան հաւաքածու մը:

Հակառակ բոլոր փնտառութեան, անկարելի եղաւ գտնել իր այս առաջին գործը, որ ինծի թոյլ պիտի տար ամբողջական կերպով մը ներկայացնել հեղինակը:

Որովհետեւ՝ գնահատութիւնը կամ քննադատութիւնը, զոր պիտի փորձեմ կատարել Բախունցի գրականութեան վերաբերմամբ, հիմնուած ըլլալով միայն իր վերջին գործին վրայ, կրնայ ենթադրուիլ որ անխուսափելիորէն թերի պիտի ըլլան եւ անհնար պիտի դարձնեն յանգիլ եզրակացութեան մը որ ընդհանուր եւ վերջնական բնոյթ մը կրէր:

Յետոյ, ինչ որ ամենաէականն է, վերլուծման այս փորձին մէջ, աչքի առջեւ չունենալով Բախունցի գրականութեան ժամանակագրական յեղաշրջումը, կարելիութիւնը պիտի չունենամ ընելու հաստատումը այն նուաճումներուն, զոր կրնայ ան կատարած ըլլալ, կամ ա՛յն վրէպներուն եւ նահանջին, որոնց նոյնպէս կրնայ ենթակայ եղած ըլլալ, --- պատահականութիւն մը որմէ ոչ մէկ զբոյժ կրնայ անպայման ազատ ըլլալու յաւակնութեամբը ներկայանալ:

Այսուհանգերձ, հիմնուելով այն կարծիքներուն վրայ զոր Մքնաձորը կարգացող մէկ

երկու բարեկամներ ինծի յայտնեցին, հիմնուելով մանաւանդ 1932ին Երեւանի մէջ լոյս տեսած Հոկտեմբեր - Նոյեմբեր հատորին մէջ Սուրխաթեանի Խորհրդային Հայաստանի գրողներուն շուրջ գրած շատ համառօտ ներկայացումներուն մէջ Բախունցի մասին ունեցած արտայայտութեանց վրայ, երբ այս վերջինը գեւ Սեւ Յելերի սերմնացանը չէր հրատարակած բայց զայն բաղկացնող պատմութեան մեծ մասը լոյս ընծայած էր, այնպէս կը կարծեմ թէ վերլուծական այս փորձը կարելի է, որոշ համեմատութիւններ պահելով, համարել Բախունցի գրականութեան ներկայացումը:

Սեւ Յելերի սերմնացանը կը բաղկանայ տասը պատմութեան:

Շեշտուած, բացայայտ նախընտրութիւն մը ունի Բախունց զիւղական միջավայրին ու անոր մէջ ապրող էակներուն հանդէպ: Նախընտրութենէն աւելի նոյն խի՝ խորունկ սէր եւ փառամ ունի: Մասնաւոր աղապատանք մը՝ որքան բնութեան նոյնքան անոր ծոցին մէջ տըքնող, անոր հետ մշտական յարաբերութեան մէջ դառնող խոնարհ, համեստ, անկնճիռ եւ զուլալ գեղջուկներուն հանդէպ: Բնութիւնը եւ անոր մէջ ապրող, անով սնանող էակները անբաժանելի ամբողջութիւն մը կը կաղմեն, մէկը միւսով բացատրուող, մէկը միւսով յատկանշուող:

Անկարելի է գտնել մէկ պատմութեան անց-

եայն ու զիւղը վերարտադրողներուն մէջէն որ կանգուն մնայ, եթէ փորձենք բնութիւնը անջատել ներկայացուած էակէն կամ գրուագէն: Որովհետեւ իրրեւ պարզ, հասարակ տէքոս, իրրեւ արտաքին անհրաժեշտութիւն մը չէ որ բնութիւնը իր ներկայութիւնը կը բերէ. այլ ներքին, խորունկ անհրաժեշտութիւն մըն է ան, սերտորէն կապուած մարդկային ապրումի պատանկին, անով շաղախուած, ու զայն բացատրող: Բնութիւն եւ ապրում այսպէս շաղախուած, իրարու զօդուած, պատմուածքը կը դարձնեն զուգերդ մը, որուն մէջ իւրաքանչիւրին երգը, իր սեփական երգը ըլլալով մէկտեղ, լրացումը, ամբողջացումն է միւսին, եւ հետեւարար առանց մէկուն միւսը, որքա՛ն ալ հօր, որքա՛ն ալ ներդաշնակ, զատապարտուած է տպաւորութիւնը ձգելու կիսատին, անկատարին:

Գիւղական կեանքի վերարտադրութիւնը եղող այս պատմուածքները կարելի է բաժնել երկու խմբաւորումի:

ա) Անոնք որ կը ներկայացնեն յեղափոխութենէն առաջուայ կեանքէն դրուագներ:

Այս խմբաւորումին մէջ մտնող չորս պատմուածքներով 1) ալ Բակունց կուտայ զրուագ մը անցեալ կեանքէն, երբ ձարական բռնատիրութիւնն էր որ իր հարստահարիչ ու կամայական իշխանութիւնը կը տարածէր մինչեւ ամենայնտին անկիւնը:

Կարելի է ըսել որ քարոզչական ոչ մէկ տող չկայ անոնց մէջ: Քարոզչական ա՛յն խմաստով որ անմիջապէս խրտչեցնէր ընթերցողը, եւ երեւան բերէր ուղուած, բռնադրօսիկ ճիգ մը: Որովհետեւ փութամ անմիջապէս ըսել որ, անոնցմէ չեմ որ, յանուն հինցած, ժամանակավրէպ եւ դոց եղած տարազներու, գրագէտը կ'ուզեն վերածել կեանքի ընթացքէն դուրս ապրող, հետեւարար աւելորդ եւ անպէտ արարածի մը, որուն անփառունակ ճակատագիրը ըլլար, դարձեալ յանուն արժէքադրկուած տարազներու, թեւածել պարապին մէջ, ոտքերը կտրը-

1) Խոնարի Աղջիկը, Նամակ Ռուսաց քաւորին, Սպիտակ Զին, Միքիալ:

ւած հողէն, հասարակ փառնի մը նման զուարճացնելու համար ձանձրոյթէ յօրանջող մարդոց խմբակ մը: Քանի որ, ինչպէս կը գրէ Ժան Քատու, « Արդի մտաւորականը ամէն բանէ առաջ մարդ մըն է որ կ'ապրի, որ նոյն իսկ միւս ապրողներէն աւելի հօգրապէս կ'ապրի, քանի որ այդ միւսներէն աւելի լաւ գիտէ եւ կը հասկընայ քէ ինչո՛ւ համար եւ ի՛նչպէս կ'ապրի: »

Անհնար կը դառնայ հետեւաբար ընդունիլ ճշմարիտ գրագէտ մը որ նախ՝ ապրելով կեանքը միւս ապրողներէն աւելի՝ ուժղնօրէն, յետոյ՝ գիտակցելով թէ ինչո՛ւ համար եւ ի՛նչպէս կ'ապրի, իր գրականութեամբը անտեսէ այն կենսա-կան եւ հրամայողական հարցերը որ կը բղխին անպայմանօրէն իր այս գիտակցութենէն:

Ասով բնական է ըսել չեմ ուզեր որ գրականութիւնը պէտք է վերածել հասարակ քարոզչութեան, որ եթէ մարդկութեան բոլորած բացառիկ շրջաններուն անհրաժեշտաբար եւ պարտադրաբար պիտի ըլլայ նաեւ գրագէտ մարդունը, բայց անոր գործունէութեան որոշ եւ մասնաւոր մէկ երեսին համար միայն, գործունէութեան այն մասին համար որ պիտի ձգտի անմիջական արդիւնքի ստացման, եւ պէտք չէ տարածուի ստեղծագործական իր բոլոր աշխատութեանց վրայ:

Ահա այս առումով է որ կ'ըսեմ թէ Բակունցի այս պատմուածքներուն մէջ կարելի չէ հանդիպիլ քարոզչական բնոյթ ունեցող եւ ոչ իսկ մէկ տողի:

Մէկ կամ երկու էակի կեանքի պզտիկ մէկ դրուագն է որ կը սեւեռէ Բակունց, շրջանակի մը մէջ որ կանչուած է աւելի կարկառ ու երանդաւորում բերելու անոնց կերտումին:

Պարզուկ, Խոնարհ էակներ են անոնք, որոնց կեանքի չար ու բարիի ծանօթութիւնը այնքան ընդարձակ է որքան իրենց աշխարհագրական ծանօթութիւնը որ, շատ յաճախ, չանցնիր զիւղը եղերող լեռներէն անդին, ու երբ կ'անցնի, այնքա՛ն հազուագէպօրէն, կը հասնի մինչեւ մօտակայ գիւղաքաղաքը: Անոնց համար կեանքը ամբողջութեամբ կը սահմանափակուի հողի կտորով մը, որուն վրայ տարիներէ ի վեր քրտինք կը թափեն, ժառանգականօրէն, եւ որ, տարիներու եւ սերունդներու այս երկարածը գումով եւ բարդումով, դարձած է իրենց մարմ-

ներն, հոգիին ու մտքին, իրենց ողջ էութեան անքակտելի մէկ մասնիկը: Յետոյ նաեւ կումով մը, կամ եզով եւ ձիով, որոնց ընկերակցութեան անոնք ընտելացած են անմիջապէս որ աշխարհին բացած են արտաքին աշխարհին, որոնց գոյութեան այնքան արժէք եւ նշանակութիւն կ'ընծայեն որքան իրենց սեփական գոյութեան, որոնց հետ կը վարուին ինչպէս իրենց մարմնին ունէ մէկ մասին հետ — խնամքով, հոգածութեամբ, ինչպէս տան ունէ մէկ հարազատին հետ — սիրով, գուրգուրանքով եւ նուիրումով: Աշխատանքին մէջ, զոր այս մարդիկը կը կատարեն լուսարացէն մինչեւ իրիկնամուտ, կանգնած են կողքին անոնց զոր, բնազդօրէն, իրենցմէ աւելի անհրաժեշտ կը նկատեն եւ, որքան զանոնք աշխատանքի մղելու նոյնքան իրենց աշխատանքին մէջ գոտակնդուելու եւ աշխուժանալու համար, կը խօսին անոնց հետ, ոչ թէ տիրաբար, այլ մտերմաբար, սրտցաւօրէն:

Օրերը կ'անցնին միապաղաղ, երեւութական հանդարտութեամբ մը: Մարդիկը կ'ըսեն՝ իրենց անցնող օրերուն վրայ, բայց անտրտունջ, երջանկութեամբ մը որ տօգոյն համակերպութիւն մըն է իր խորքին մէջ:

Այսպէս՝ մինչեւ որ կը պատահի դէպք մը որ կը յառաջացնէ բեկում մը այս անպաճոյճ հոգիներէն ներս: Բեկում կ'ըսեմ, եւ ոչ թէ տուամ, որ բարդ է, որ կ'ենթադրէ եթէ ոչ անպայման յաղթանակի պահեր, գոնէ ներքին պայքար մը ուր բաղխումները զօրաւոր կ'ըլլան ու կը յառաջացնեն սրտաշարժ եւ արիւնոտ բըրկոտումներ:

Այս է պատճառը անշուշտ որ Բակունց իր անձերուն հոգեբանական առաւել կամ նուազ խորութիւն ներկայացնող ապրումներ ու անոնց վերլուծումը չի տար: Իրողութիւններով, ապրումի դրսեւորումով է որ մեղի կը տրուին իր անձերը:

Նամակ Ռուսաց Թագաւորին պատմութեան մէջ Արթին պապն է որ նախ մեղի ցոյց կը տրուի գիւղական առօրեային մէջ, այդ առօրեան կազմող միօրինակութեան ու պարզութեան մէջ: Սակայն ցաւ մը ունի Արթին պապը, ցաւ մը որ զինք յաճախ եւ ուժգնօրէն կը տանջէ: Յաւն է ատիկա իր գաւկին որ քսոորում

է, չի զիտցուիր ուր, անորոշ պատճառով մը: Օր մը տանուտէրը խորհուրդ կուտայ խնդրագիր դրկել ուղղակի Ռուսաց Թագաւորին: Այս խորհուրդին հետ ահա որ ուրախութիւնը կը մտնէ Արթին պապի տան սեմէն ներս:

— Պապի, Թագաւորը նամակդ որ ստանայ, ի՞նչ պիտի անի, — հարց կուտայ իրեն թոռը:

— Կը կարգայ, հրաման կտայ պրիստաւին, որ Ատամով Եզօրին, որտեղ որ է, սաղ — սամամաթ հասցրէք իրեն հօրը:

— Բա ո՞նց է գնալու նամակը:

Է՛հ, դուք հլա աշխարհքի որտե՞ղն էք... Փոշտ կայ, եասաուլ կայ, պրիստաւ կայ: Տանելու են Թագաւորին ձեռքին զնեն: Գէօօլան ասում էր, որ պիտի լաւ թղթի վրայ գրել տաս, զալամն էլ ոսկի պիտի լինի, թէ չէ՝ ընդունել չեն:

Կը հաւատայ Արթին պապը որ, այո՛, լաւ թուղթի վրայ ու գրիչն ալ ոսկի պէտք է ըլլայ, եթէ ոչ չ'ընդունուիր:

Այս միամիտ հաւատքը արդէն բաւական է, նշմարելու եւ զգալու համար Արթին պապը, ինչպէս բոլոր Արթին պապերը, որ այդ օրերու մարդիկը եղան: Արթին պապի այս մէկ քանի խօսքերը կը փոխարինեն հոգեբանական վերլուծման ամբողջ փորձ մը: Ու արուած ըլլալով անձերու հոգեկան պարզութիւնը, պատմութեամբ այս ձեռով աւելի կը նպաստաւորուի եւ կենդանի, առոյգ կը դառնայ, որովհետեւ բազմերես չեղող հոգեկան վիճակի մը վերլուծումը պիտի ծանրաբեռնէր զայն, ու նոյն իսկ ձանձրալի պիտի դարձնէր:

Արթին պապը նամակ գրողին կը տանի պանիր, իւղ, եւ բոլորին աչքի լոյսը եղող «պոչը ծաղիկ երինջը»: Ու կը վերադառնայ թղթի փոքրիկ կտորով մը:

— Նազու աղջիկ, — կը պատուիրէ իր պառաւին — լաւ տեղ դիր, աչքի լոյսի պէս պահիր: Պատասխանն էլ թղթովն ա գալու: Թէ որ կորա՛ւ...

Ու օրերը կ'անցնին յոյսի եւ սպասման մէջ: Չմեռ մը ամբողջ կ'անցնի: Ու իր թոռներուն, որոնք հարց կուտան թէ ինչո՞ւ դեռ պատասխան չի գար, Արթին պապը կը պատասխանէ.

— Ա՛յ որդիք, հէնց իմանում էք թէ Թագաւորը ունի չունի էդ հոգսն ունի՞: Կոխ կայ,

ժողովուրդին կերակրել կայ: Օրը ես հազար ասեմ, դու երկու հազար իմացի, — էդքան նամակ ու խնդիրք է ստանում: Հալրաթ մի օր էլ մերը ձեռքը կը հասնի... Բա էդ թուղթն ինչի՞ համար են տուել: Էդպէս էլ վրան դրած է. Արութիւն Ազամովից նամակ Ռուսաց թագաւորի վրայ:»

Որքա՞ն յուզիչ են այս յուսադրական խօսքերը, որոնք, պարզ է, իր թոռներէն աւելի իրեն իսկ կ'ուզուին: Իր զաւակը վերատեսնելու երազը իր ցաւն էր նախապէս: Նամակին վրայ անիկա յոյս, հաւատքի շափ զօրեղ յոյս է դարձած իր մէջ: Զայն խորտակել, պիտի նըշանակէր զինք կեանքին կապող թելը փրցնել: Ատոր հակադրելու համար, Արթին պապը կը դտնէ պատրուակները, կը պարզէ զանոնք, որքան ուրիշները նոյնքան եւ ինքզինքը զօտեւանդելու համար: Այսպէս էր կեանքը այն ատեն: Ու այսպէս կ'անցնէին օրերը, մարդիկ ալ՝ անոնց հետ: Ոչ թէ ցաւին դէմ դիմուելու, զայն ոչնչացնելու համար թափուող ճիւղերուն ներշնչած յոյսով, այլ արեւելեան ճակատադրապաշտութեան ու համակերպութեան թոյլատրած յոյսով:

Օր մըն ալ գիւղին տանտէրն ու քէօխվէն կը փոխուին: Այս վերջինը Արթին պապին հետ հին հաշիւ ունեցող մըն է: Արթին պապը կը կանչուի պրիստաւի մօտ: Անպայման թագաւորէն պատասխանը եկած ըլլալու է կը խորհի: Բոլոր տնեցիները կը ճառագայթեն: Նոր զգեստները հագած, գլուխը փափախով ու ձի հեծած, Արթին պապը կ'անապարէ պրիստաւին մօտ: Բայց կը վերադառնայ տուն, արիւնոտած բերանով, ծեծուած, վոնտուած: Նորընտիր քէօխվէն իր վրէժը լուծած էր...

Այսուհանդերձ «միամիտ ծերունին մինչեւ վերջին րոպէն հաւատում էր, որ մի օր պատասխանը գալու է: Երբ յիշում էր այն օրը, դէմքն ալայլուում էր եւ ազօտանում էր նրա յոյսը: Սակայն յետոյ նորից յուսադրում էր իրեն էլ, մեկ էլ:

«— Նազու աղջիկ, ես մեռնում եմ: Հուր յաւիտեան պարտական մնաս, թէ պատասխանն ստանալիս չգաս եւ իմ գերեզմանին իմաց չտաս, — ասել էր նա վերջին լուսաբացին:»

Այս խմբաւորումին ամենայաջող պատմւածքն է, ըստ իս, Սպիտակ Զին:

Պատերազմի տարի է: Կառավարութիւնը կը հրահանգէ ամէն կողմ որ բոլոր ձի ունեցողները իրենց ձիով պէտք է դիմեն առաջին մօտակայ քաղաքը: Զիտ պէտք կայ...

Սիմոն մէկ ձի ունի ընդամենը, զոր դնած է երկու տարի առաջ, որովհետեւ «տուն եմ, երախաների տէր եմ, առանց ձիու հնար չկայ...»: Յոլակը, այս է ձիուն տրուած անունը, կ'օղնէ Սիմոնի դաշտային աշխատանքներուն մէջ:

Թագաւորական հրամանը կրակի մէջ կը ձգէ զինք: Ինչպէ՞ս աշխատանքը յառաջ տանիլ առանց ձիու, առանձին: Ու միտթարութիւն, յոյս կը փնտռէ ինք իր մէջ: Ո՞վ գիտէ, թերեւս չհաւանքի իր ձին, անպէտ համարեն բանակի համար, ու ձգեն իրեն: Ու կը սկսի արդէն ինք նախաբէութեան դիմել: Բարձրահասակ չէ իր ձին. արագավաղ չէ Յոլակը: Պիտի առնե՞ն, պիտի յափշտակե՞ն զայն արդեօք իր ձեռքէն: Բայց ոչ, չէ՞ որ ան զուրկ է շատ մը յարմարութիւններէ...

Սիմոն անքուն կ'անցընէ այդ գիշերը: Առաւօտ կանուխ, միւս բոլոր գիւղացի ձիատէրերուն հետ ճամբայ կ'իյնայ քաղաք, ուր եկած հաւաքուած են բոլոր շրջակայ գիւղացիները իրենց ձիերով:

Իւրաքանչիւր գիւղի ձիատէրերը կը կանչուին մէկիկ — մէկիկ ու կուգան: Սիմոն կը գիտէ թէ ինչպէս անասնաբոյժը կը քննէ ներկայացուած ձին ու վէրքի մը, Ֆիզիքական ու եւ է շեշտուած անկարութեան կամ հիւանդութեան պարագային միայն կը վերադարձուի իր տիրոջ:

Յոյսը կը պարպուի հետզհետէ Սիմոնի սրտէն: Յոլակը կորսնցնելու վախը տակաւ վստահութիւն կը հագնի, քանի որ իր ձին ոչ հիւանդ է, ոչ կաղ կամ կոյր, եւ ոչ ալ վերաւոր:

Ու յանկարծ միտք մը կը ծագի իր մէջ: Կարգը դեռ իրենց գիւղին եկած չէ: Կը հեռանայ հրապարակէն ու հեծնելով ձին, արագավաղ կը սլանայ դէպի գետափ: Հոն առանձնութեան մէջ, կը կապէ ձիուն ոտքերը, ու խոշոր չեչաքարով մը կը քերծէ Յոլակի կոնակի կաշին, մինչեւ որ արիւնը կը ժայթքէ ու բացուած վէրքը կը խորանայ: Զին, ցաւին ազդեցութեան տակ, կը փոռի գետին: Դժուարաւ կրնայ ոտքի

հանել զայն, ու կը վերադառնայ հրապարակ:
Իր այս հնարքը ի դուր կ'անցնի սակայն:
Անասնարոժքը մէկ ակնարկով կը հասկնայ ի-
րականութիւնը, ու Յոլակը կ'երթայ խառնուիլ
զրաւուած ձիերու կարաւանին:

Պարզ, առանց հանգոյցներու է պատմու-
թիւնը: Բայց յուզիչ հաղորդականութեամբ մը
տրուած: Իրաւ է թէ պատմութեան սկզբնաւո-
րութեան, Սիմոնի կապը ձիուն հետ ցոյց կը
տրուի անոր աշխատանքին, օրուան հացին ա-
պահովութեան համար ներկայացուցած անհրա-
ժեշտութեան հետ, քիչ վերջ սակայն այս կապը
մեղի կը յայտնուի երկրորդ, աւելի մարդկայ-
նական ու աւելի խոր բնոյթով մը: Յոլակը իր
ամենօրեայ աշխատանքին ընկերը եղած է, յոգ-
նած ու տանջուած է իրեն հետ, իրեն հաւասար
ու իրմէ աւելի նոյն իսկ. դոր խնամած ու կե-
րակրած է հարազատի մը նման, դուրգուրան-
քով: Երբ վերջնականապէս կը կորսնցնէ զայն,
կրած նիւթական զրկանքէն շատ աւելի զինք
ընկճողը ուրիշ պատճառ մըն է, զայն ապար-
դիւն տեղը վիրաւորած, չարչարած ըլլալու ի-
րողութիւնը:

« Սիմոնը ձիու շուաններէն է սանձից
զգում էր Յոլակի ողորկ մարմնի ծանր հոտը:
Եւ մի միտք, ծանր բեռից աւելի դժուար ծան-
րութեամբ նստել էր նրա գլխում եւ նա խոնար-
հել էր գլուխը: Բայց փակ աչքերով էլ տեսնում
էր արնոտ չեչաքարը:

« — Հէնց իմ փխտութիւնը մնաց, Յոլակ
... Հիմա հազար ձիու մէջ անտէր խրխնջում ես
... Ետքս տեսնես արիւնը ցամաքեց:

« Եւ նա բուռը լայն բաց արեց, այն բուռը,
որով բռնել էր քարը ... »

« Հէնց իմ փխտութիւնը մնաց, Յոլակ... »:
Այս սրտաշարժ աղաղակն է որ կը բարձրանայ
իր մէջէն, ու խղճախայթը, հակայ ծանրութեան
մը պէս կը խոնարհեցնէ իր գլուխը, ու իր սե-
փական ցաւին մտածելու փոխարէն, իր Յոլա-
կին, անոր անտիրութեան ու ցաւին է որ կը
մտածէ:

Այս պատմութեան մէջ, մեր աչքերուն ու
մտքին առջեւ աւելի ուժգնօրէն պարզելու հա-
մար դոյալիճակ մը որ այն օրերուն, անցեա-
լին էր, Բակունց հպանցիկ կերպով մէջ կը բե-
րէ բաղմամբիւ ձիերու տէր մարդուն պարագան,
որ, Սիմոնի ու իր բաղդակիցներուն համար ան-

բացատրելի հնարքով մը, կը յաջողի ձի մը
չտուած վերադառնալ: Բակունցի տեղ ուրիշ մը
հաւանարար կամ թերեւս այս պարագան առիթ
մը նկատէր, կատարուած անարդարութիւնն ու
անհաւասարութիւնը աւելի հօրապէս երեւան
հանելու համար, աւելի զարգացնելու զայն եւ
մխրճուելու խորհրդածութեանց մէջ: Այստեղ
արդէն արուեստագէտն է որ երեւան կուգայ:

Որովհետեւ առանց այդ զարգացումին եւ
խորհրդածութեանց արդէն մենք բոլորս կը
մղուինք անդրադառնալու գործուած ակնարախ
անարդարութեան վրայ, որ արդէն զրկուած-
ները աւելի եւս կը զրկէ, իսկ ունեւորները կը
խնայէ:

Ո՞ւր պիտի մնար արուեստագէտը, եթէ
զրոյր փնտռէր միայն այս կամ այն զգայա-
րանքին վրայ անմիջական տպաւորութիւն յա-
ռաջացնել, որ, որքան ալ տրուած պահուն մէջ
զօրաւոր, այսուհանդերձ շուտով պիտի անց-
նէր, շարժման մէջ դրած չըլլալով մեր մտա-
ծումը, որպէսզի ան լծուի աշխատանքի, ի՞ր
իսկ սեփական միջոցովը հասնելու համար ան-
հրաժեշտ յանգումին:

Այս պատմուածքին մէջ ալ որոշապէս կը
տեսնուի որ Սիմոն, ինչպէս իր բոլոր բաղդա-
կիցները, ոչ մէկ ընդգլխում ցոյց կուտայ եղած
զրկանքին համար: Այս ընդգլխումը մենք, բն-
թեցողներս է որ կ'ունենանք: Բակունց այս-
պէսով ուղած է հարազատ արտայայտիչը ըլ-
լալ տրուած չըջանի եւ միջավայրի կեանքին ու
զայն ապրողներու հոգեբանութեան: Որովհե-
տեւ առաւելապէս իրապաշտ զրոյ մըն է ան:
Այս իրապաշտութիւնը սակայն չոր, առարկա-
յական չէ. գիտական իրապաշտութիւն մը չէ,
ինչպէս մտածել եւ ըսել կուտայ ոմանց այս
սահմանումը. անոնց, որոնք, ապրելով հան-
դերձ կեանքը, երբեք ալ պիտի չզիտնան զայն
վերաբաղը իրենց ստեղծագործութեանց
մէջ: Ամէն զրիչ շարժել գիտցողի տրուած չէ
անշուշտ ըլլալ իրապաշտ զրոյ մը այն լայն,
ճշմարիտ ու խորունկ ըմբռնումով եւ հասկացո-
ղութեամբ, որ մեղի իրապաշտ կոչել կուտան
Պարլաքն ու Զօլան, Ֆլոպեոն ու Սթանտալը:
Իրապաշտ զրոյր կեանքին մէջ մնալով հան-
դերձ, զայն իր բովանդակ իրականութեանը
մէջ տեսնելով ու զգալով հանդերձ, գիտէ եւ

կրնայ ստատոնիլ այդ կեանքէն վեր ու նշմարել տալ, թելադրել ուրիշ, լաւագոյն կեանք մը:

Նկարագիրներ կերտած չէ Բակունց: Անձեր են որոնք, զէպքի մը առթիւ եւ այս զէպքին իրենց մէջ յառաջացուցած բեկումովը, կ'ուրուագծուին:

Այս զէպքը վերաբերելով տրուած անձին միայն, մենք գիտենք եւ կը հասկնանք սակայն որ իրեն ծնունդ տուող շարժառիթներովը ան կը վերաբերի բոլորին որ կը գտնուին այդ անձին դրութեան մէջ, ու հետեւաբար պատմական շրջանի մը ներկայացումն է իրականին մէջ, պատմական՝ քանի որ անցեալն է այլեւս անիկա:

Ձեն պակասած, կ'ենթադրեմ, Բակունցը քննադատողներ, անցեալին այս ձեւ վերաբրտագրումին համար, — առանց զայն անցուցած ըլլալու մարքեան խողովակէն, գոնէ վախճանին վարդապետական դարձումը մը տուած չըլլալուն համար: Բայց հոս արդէն վրիպած պիտի ըլլար Բակունց, որովհետեւ ինկած պիտի ըլլար զրական այն սեռին մէջ որ յեղափոխական շրջանինը եղաւ, բեմերէն մինչեւ մամուլը, եւ որ հետապնդուած նպատակին համար իր բերելիք անմիջական եւ խորութենէ գուրկ նպաստէն տարբեր արժանիք մը պիտի չներկայացնէ: Ձգուչացած ըլլալով ատկէ՝ Բակունց զրականութեան պատմութեան մէջ մնայուն տեղ մը կ'ապահովէ իրեն համար: Այսուհանդերձ անժխտելի է անոր նպաստը կեանքէն ալ ներս, քանի որ նոր ստեղծուող գոյափոխական հետ այդ անցեալին հակադրութիւնը ուրիշ մը տաժում չի թելադրեր ու եւ է ընթերցողի, եթէ ոչ այդ անցեալին անվերապահ դատապարտութիւնը:

բ) Անոնք որոնց վերաբրտագրած կեանքի պատառիկը կը գուգաղիպի յեղափոխութեան անմիջական սկզբին:

Նոյն միջավայրը այս պատմութեանը մէջ ալ 1) : Պատմութիւնը կը սկսի այնպէս ինչպէս կը սկսէր նախորդներուն մէջ: Մոտայ ճակատագրի մը նոյնքան մոտայ համակերպութեամբ ենթարկուած մարդիկ: Իրենց միօրինակ

աւօրեան ապրող: Դաշտերուն մէջ կամ արտերուն: Ու յանկարծ յեղափոխական բանակը կը հասնի: Բրուտի տղան է ահա, որ մինչեւ այն ատեն հեղօրէն եւ անտրտուն կը կատարէր իր սեւ աշխատանքը, կ'առաջնորդէ կարմիր յառաջապահները: Սեւ ցեղերի սերմնացանն է նորէն, որ յանկարծուտ մօտեցող կարմիր բանակին առջեւէն նահանջող ուժերուն վրայ իր հրացանը կը սկսի պարպել:

Ու մենք հիմա իրաւունք ունինք առնուազն զարմանալու հրաշքի մօտեցող այս երեւոյթին վրայ: Եթէ իրաւ է որ Բաւտի տղան պատմութեան մէջ, նախ քան կարմիր բանակին հասնելը, մեղի կը խօսուի զիշերային գաղտնի գումարումներու մասին որոնց կը մասնակցի բրուտի տղան Անդոն եւս, սեւ ցեղերի սերմնացանը մինչեւ վերջին պահուն ցոյց կը տրուի մեղ որպէս մէկը որ իր սովորական աշխատանքէն զատ ու եւ է մտադրադում չունի: Գիւղը, իր ամբողջութեանը մէջ, երկու պատմութեան մէջ ալ, որպէս միջնորդ արտասովոր երեւոյթ մը չի պարզէր ի լուր յեղափոխութեան, ի լուր մօտեցող կարմիր բանակին:

Ինձի անհաւատալի կը թուի որ յեղափոխութեան նման տարերային շարժում մը, մանաւանդ երբ հետզհետէ իր մէջ կ'ընկղմէ ամէն ինչ, ու կը մօտենայ իր քանդումով ու խոտոտմաներով, արձագանդ չգտնէ մարդոց մէջ, որքան ալ անոնք աղբին գիւղի մը անձուկ սահմաններէն ներս, որքան ալ անոնք յանձնուած ըլլան կրաւորական ճակատագրապաշտութեան մը:

Եւ անշուշտ որ այսպէս եղած չէ: Ըսել կ'ուզեմ որ անպայմանօրէն գիւղը, իր մեծով ու պզտիկով, տղամարդով ու կիներով, իրար է անցած ու առնուազն հեքոտ սպասումի մը մէջ շարունակած է գալարուիլ, յանձնուելով, եթէ ոչ դրական այս կամ այն ուղղութեամբ կեցուածքի, գոնէ արտայայտութեանց որոնք ստեղծած ըլլալու են այն միջնորդութեամբ, անօրինակ, տենդաճար ու ամպրոպալի, որուն մէջ միայն Անդոյի ու սերմնացանին հերոսական զոհաբերութիւնը ոչ միայն հասկնալի, այլ ճշմարիտ վստահութեամբ մը օծուած երեւան պիտի դար:

Բայց այստեղ է որ կը կայանայ, իր այնքան առաւելութեանց քով, Բակունցի միակայն հիմնական տկարութիւնը: Ան Լրբեք ալ չէ

1) Բրուտի տղան, Սեւ Ցեղերի սերմնացանը:

փորձած ստեղծել հաւաքական միջնորդութիւնը: Եթէ այս զգուշութիւնը կրնար արդարանալ իր նախորդ խմբաւորումի պատմութեամբ քննարկելու համար ուր պարտադիր անհրաժեշտութիւն մը չէր հաւաքական այս միջնորդութիւնը, հոս կը բացատրուի միայն Բակունցի տկարութեամբը:

Այս ժխտական հաստատումը կարելի է ընել առանց վարանելու:

Եւ ապահովաբար իր այս տկարութիւնը պարտկելու համար է որ այստեղ ալ ան ծանրացած է արտաքին աշխարհի, բնութեան ներկայացմանը մէջ ուր, պէտք է շեշտել, Բակունց անժխտելի վարպետ մըն է, անուրանալի արուեստագէտ մը, — որքան նկարչի վրձին, նոյնքան եւ աւելի ներքին յորդահոսանք քնարերգութիւն մը որ կը ծաւալի ամէն ինչի վրայ, անշունչ թէ շնչաւոր, եւ զանոնք կը պարուրէ քաղցր յուզականութեամբ մը: Իր այս առատ ու ինքնարուեստ քնարերգականութիւնը թաթաւուն է բարութեամբ, խոր կարեկցութեամբ: Երբ մըն է Բակունցի քնարերգականութիւնը, որուն նուազին տակ անկարելի է անդդալ մնալ, չթաթխուիլ անով:

Բայց քանի որ վերլուծող մը պէտք է երբեք չքաջուի ճշմարտութիւն մը արձանագրելէ, պէտք է աւելցնեմ որ հեղինակը, գիտակցելով իր այս շնորհին, քիչ մը շատ յաճախ կ'ապաւինի անոր ու տեղ տեղ իրր զէնք կը գործածէ, քողարկելու համար բաց մը, որուն բնոյթը սահմանեցի քիչ առաջ:

*
**

Ան հաջը միակ պատմութեամբն է, որուն միջավայրը քաղաքն է, եւ ներշնչուած է յեղափոխութեան յաջորդող վերակառուցման շրջանէն:

Լեւոն ամբողջ օրը թիւերու եւ հաշիւներու հետ է: Ան շատ անգամներ, աշխատանքէն յետոյ ալ, մինչեւ կէս գիշեր, իր սենեակի գրասեղանին վրայ « փութում է բաղմամբիւ աղիւսակներ, ցուցակներ, վերցնում է մատիտը, գլուխը կախում նրանց վրայ եւ հաշուում: Եւ զնում են տրակտորները, գութանները, քաշում են երկաթէ փոցիները եւ շարքացանները, զարնան խոնաւ հողի մէջ թափում են սերմեր, ծլում է բամպակը, աղջիկները քաղհանում են, ծաղ-

կւմ է բամպակը, աղջիկներն իրենց գոգը լցնում են սպիտակ բամպակով ու բամպակը գնում է գառնալու գոյնզգոյն շիթ, աղջիկները հաղնում են նախշուն շիթը եւ երբ խաղում են նրանք, թրթռում է մարմինը, քամին փրփրացնում է գէյրան եւ ծաղկաւոր գէյրան ծփում է, ինչպէս արտը: »

Լեւոնի սենեակի « պատուհանից երևում է քաղաքի մեծ մասը, բլուրները, ճանապարհները, որոնք եռ ու մեռ զնում են, զնում են անվախճան՝ դէպի ուրիշ քաղաքներ ու գիւղեր: Այդ ճանապարհներով Լեւոնն ուղարկում է բաղմամբիւ մեքենաներ՝ դէպի գիւղերը եւ նրանց դաշտերը, որտեղ էայ ջուր, արեւ եւ քրտինք: »

Իրիկուն մը գործէն սենեակ վերադարձին, Լեւոն անսովոր տրամադրութեամբ մը կը նայի իր սենեակը լեցնող իրերուն ու անօրինակ երեւոյթով մը անոնք կը ներկայանան իրեն: Ան չի գիտեր ինչո՞վ բացատրել իր հոգեկան այս վիճակը: Իր մտածումը կը թափառի այս կամ այն առարկային վրայ, որոնցմէ իւրաքանչիւրը հին պատմութիւն մը կը յիշեցնէ իրեն: Յիշողութիւնները կը բաղմանան, կը կուտակուին, նոր աշխարհ մը կը ստեղծեն ու Լեւոնը ամբողջութեամբ կ'առնեն իրենց մէջ: Աղջկան մը հանդէպ իր ունեցած նուրբ սիրոյ զգացումն է որ, ուժգնօրէն ու տիրաբար, յորձանքի մը նման կը քաշէ զայն իր ետեւէն: Անկարող՝ աշխատելու, անկարող՝ սենեակ մնալու, Լեւոն կ'ելլէ փողոց: Ան, գիշերով, կը քալէ ցեխոտ փողոցներէն, բայց շատ բան մը չի նշմարեր արտաքին աշխարհէն, որովհետեւ իր բովանդակ էութեամբ կը շրջադայի յուշերու յաճախանքովը կառուցուած ներքին, երազային աշխարհի մը մէջ: Նոյնիսկ դուրսէն պատահաբար նշմարուած երեւոյթ մը կամ լսուած ձայն մը աւելի կը շեշտեն, աւելի կը գունաւորեն ներքին իր ապրումները: Այսպէս է որ սատիռոյի մը երգը կ'աւելցնէ նոր դրուագ մը իր սիրած աղջկան հետ ունեցած բնկերութեան շրջանին ողեկոյժմանը վրայ: Յուշերու այս տողանցը զինք կը թրթռացնէ քաղցր, երջանիկ զգայնութիւններով: Ու կը շարունակէ փողոցներէն այս թափառումը, հետզհետէ խորանալով երազանքի իր անձնատուութեանը մէջ: Ու յանկարծ դէպք մը վրայ կը հասնի եւ կ'արգիլէ այս անձնատուութիւնը կատարեալ եւ ամբողջական դառնալէ:

Շրջակայ գիւղէ մը հսկայական ծանրութեամբ երկաթ քաղաք փոխադրող սայլի մը կը հանդիպի Լեւոն: Անինները միւրճուած են ցետիւն մէջ, ու դոմէշները, ամբողջ օրուան մը տքնումէն արդէն յոգնած, չեն յաջողիր յառաջանալ: Սեւ «հաց»ը, այսինքն երկաթը, թանկագին նիւթ մըն է վերականգնող կեանքին համար: Սայլին ընկերացող երիտասարդները մոռնին մէջ կը ձայնեն, ուժ կը ներշնչեն դոմէշներուն. մէկ քանին կ'անցնին անիւներուն ետեւ ու կը հրեն: Լեւոն, որ կանգ առած կը դիտէր, նախ առանց հասկնալու, յետոյ կամաց կամաց վերադառնալով արտաքին աշխարհին, յանկարծական ու ինքնարուխ կերպով կը մօտենայ, իր ուժերը կը միացնէ սայլը հրողներուն, սայլը ճամբայ կ'ելլէ, ու Լեւոն կը միանայ երիտասարդներուն, խօսակցելով, տեղեկութիւններ տալով ու առնելով...

Այս է պատմութիւնը:

Ստիպուած եմ հոս ալ ընել այն դիտողութիւնը որուն ակնարկեցի քիչ առաջ: Առարկողներ պիտի ըլլան անշուշտ թէ պատմութեանը կամ նորավէպը, իրենց հանգամանքին իսկ բերմամբ, չեն կրնար կեանքը իր բոլոր կողմերովը ներկայացնել, ըլլալով կեանքի մը մէկ դրուագին ներկայացումը: Զէ՞ որ «կեանքի պատառիկ» կը կոչենք դանոնք:

Բայց այսպիսի բացարձակ սահմանում մը եւ մեկնութիւն մը սխալ են, ըստ իս: Ծիւղէ անշուշտ որ դրական այս սեռը չի տար կեանք մը իր ամբողջութեանը մէջ: Սակայն ան ընտրուած դրուագը, որ տուեալ պահու մը կամ ժամանակի մը ամբողջական կեանքն է դարձեալ, պէտք է արտայայտէ այդ ժամանակին ամբողջականութեանը մէջ, այդ ժամանակին դիմադրութիւնը չանտեսելով, — որքան իրեն չըմանակ, նոյնքան որպէս արտայայտուած դրուագը բացատրող, կենդանացնող:

Ժամանակաշրջանի մը մէջ ուր անհատը, անկախաբար հաւաքականութենէն, դեռ ինք իր մէջ ամբողջութիւն կը կազմէր, հասկնալի էր որ կեանքի դրուագը սահմանափակուէր ինդիւիտուալ անձին վրայ միայն: Բայց ժամանակաշրջանի մը մէջ ուր անհատը արժէք մըն է յարաբերաբար հաւաքականութեան հետ ունեցած իր աղերսին, ուր անհատը գլխաւորաբար կը բնորոշուի հաւաքականութեան ցուցադրած

դիմադրիծով, ինչպէս է այսօր մասնաւորապէս խորհրդային երկիրներու մէջ, ինծի համար անբարենքի կը մնայ կեանքի դրուագ մը որ դերժ մնայ այս օրէնքէն:

Բակունցի դիտողութիւնը դեռ անդոր է ընդգրկելու համար, մէկ անգամէն, պարզուող կեանքը իր բաղմերեսութեանը մէջ: Ահա թէ ինչո՞ւ, հակառակ պատմելու իր շնորհին, հոգեկան պահեր եւ արտաքին պատկերներ սեւեռելու իր յատկութեան, իր վճիռ լեզուին (ինծի ծանօթ խորհրդահայ գրողներուն մէջ Բակունց առաջինն է իր հայ լեզուի տիրացումովը), հակառակ իր առատաստիւտ քնարականութեան, եւ հակառակ այս բոլոր դրական տուեալներուն մեր մէջ իրեն հանդէպ յառաջացած գնահատանքին ու համակրութեան, ստիպուած ենք հաստատելու այս թերին, զոր դարձանելով միայն Բակունց իրաւունք պիտի ստանայ օժտուած արձակագիր մը միայն կոչուելէն անդին ու աւելի վեր հասնիլ:

Քսանըչորս էջեր լեցնող Սեւ հացը պատմութեան մէջ վերջին երկու էջերով երկաթ փոխադրողներու միջամտութիւնը, որ կը յաջողի Լեւոնի մինչեւ այդ պահուն ունեցած վարանումներուն ու երազանքին վերջ դնել եւ զայն վերադարձնել էականին որ համայնական աշխատանքն է, շատ տկար է մեզ գոհացնելու համար, ու չի կրնար մեզ արգիլել արձանագրելէ դրական այդ արուեստակութեան (արքիփիս) անբաւարարութիւնը:

Վերլուծական այսփորձը պիտի չուզէի վերջացնել առանց մատնանշելու իրողութիւն մը որ մասնաւոր շահեկանութիւն մը կը ներկայացնէ: Արտասահմանի մէջ դեռ այն թիւը կարծիքը կը տիրէ ոմանց մօտ որ Խորհրդային Հայաստանի մէջ մշակուող դրականութիւնը, ինչպէս մշակութային առհասարակ ու եւ ցուցակում, զուրկ է ազգային բնորոշ դիմադրիծէ: Թէ անի սպաս դրուած է միջազգայնական վարդապետութեան մը, որ կը ձգտի ժողովուրդները առաջնորդել ապագայինացումի: Այս մտայնութեան ցուցադրութիւնը եթէ ոմանց մէջ կը բացատրուի որոշ «քաղաքականութեան» մը յամառ ու անխմաստ հետապնդումովը, եթէ ուրիշներու մօտ անիկա կը բխի հաւասարապէս որ-

քան տղիտութենէ նոյնքան ալ ակտաւոր այլամերժութենէ մը, կարգ մը մարդոց մէջ անկա արդիւնքն է «աչք մտնելու» երկրպագութեան, որ կը կատարուի շարունակաբար, քիչ մը ամենուրեք, պարունակութիւն եւ արիւն տալու համար «դիրք»ի մը, որուն լրջութեան եւ անկեղծութեան հանդէպ իրենց այդ ընթացքով կասկածի ու կարեկցութեան միայն կրնան արժանանալ:

Բակունցի գրականութիւնը կուզայ հերքել այս բոլորը: Իր բոլոր պատմութեան մէջ ալ ազգային մասնայատուի ու սեփական չեւոր կայ, մարդոց ապրելակերպէն, արտայայտութեան եղանակէն, հոգեկան աշխարհէն մինչեւ ընդմիջումն իսկ, շրջապատը: Բակունցի գրականութիւնը ազգային է իր կլիմայով, ու զայն բաղկացնող բոլոր տարրերն ու յատկանիշերը կը պարունակէ իր մէջ:

Ազգային այս գիծը Բակունց կ'անցընէ ներկայէն անդին, կը հասցնէ ապագային: Այս հաստատումը չի բղիւր մեր մէջ նեղմիտ ազգայնամոլութենէ մը որ ժողովուրդները կը գինէ իրարու դէմ եւ որուն աւերները ամենէն աւելի մեր ժողովուրդը կը նշմարէ իր գոյութենէն ներս, այլ կը ներշնչէ ուրախութիւն մը առաջնորդելով այն ճշմարտութեան թէ, ապահոված ըլլալով իր ֆիզիքական գոյութիւնը ու ապրելով խաղաղութեան մէջ, մեր ժողովուրդին ստուար մէկ տոկոսը կը տքնի, կ'արտադրէ ու կը ստեղծագործէ, պահպանելով անցեալէն հասնող ներքին իր հարստութիւնները եւ զարգացնելով ինքնայատուկ իր ընդունակութիւններն ու յատկութիւնները: Թէ՛ ան որքան իր ներկային նոյնքան եւ ապագային կը խորհի, յոյսով ու հաւատքով:

Յոյսով եւ հաւատքով՝ ինչպէս Հաղթոն, Ծիրանի փող պատմութեան մէջ: Քարոտ ու լեռնոտ Սասունէն է ան, որ ջարդերուն կրցած

է փախչիլ ու ապաստանիլ Կովկաս: Ան այժմ կ'ապրի Ձեանրերդի մէջ, ուր օրերը կ'անցնին խաղաղ ու արգասաբեր աշխատանքով: Երեկոները, յաճախ, ան իր ծննդավայրէն հետը բերած «ծիրանի փող»ով կը նուազէ յուզիչ եւ ուրախ երգեր: Ինչպէս նաեւ երգեր որոնց մէջ կան «կարօտի հնչիւններ՝ վերադարձի եւ վերջին յոյսի»:

Հաղթոն է՝ որ, սրտանց, կը խօսի.

« — Հաղ մի երթամ տեսութեան մըր քարերին, մըր ձորերին, մըր Մարութայ բանձր սարին: Անիմ գիմ ծիրանի փող, ժողովեմ մարդերու, նստեմ անուշ խոտերու վրէն, հանց դառներ մարդիկ նստեն գիմ չորս բոլոր, երգեմ էնոնց խաղաղութեան գիմ երգեր, մարդիկ հալալ դուլալ ախպրտոց պէս գրկեն զիրար, չեղնի ոչ տէր, ոչ մշակ, ոչ թուր, ոչ բռնութիւն: Փշեմ գիմ ծիրանի փող, էլման ծուխ բանձրանայ երգիկներէն, խմեմ մըր լուս աղբրներէն, գիմ քրտինք կաթա մըր քարերու վրէն, մըր Մարութայ բանձր սարի ամպ թող լիզայ գիմ սիւլտակ ոսկորներ... »:

Ու երբ հարց կուտան Հաղթոյի թէ՛

« -- Հաղթ, իսկ ո՞ւմ կտաս քո ծիրանի փողը, » այն փողը՝ որ Մարութայ բարձր սարին այդ երգերը պիտի հնչեցնէ, ծերունին կը պատասխանէ.

« -- Զիմ փող կ'իտամ իմ քաջարժիւ թոռնիկին: »

Ու Բակունց իր պատմութեան մէջ կը փակէ այսպէս.

« Ձեանրեր՝րդ, Ձեանրեր՝րդ... »

« Դու դառնում ես անպարտելի ամբողջ, քո բարձր լեռները զարթնել են եւ քո լանջերին հնչում են յաղթութեան երգերը: »

« Մի վիթխարի ծիրանի փող, առանց հին ահի եւ նոր խնդութեամբ հնչեցնում է մեր արդար երգերը: »

ՊԵՏՐՈՍ ԶԱՐՈՅԵԱՆ